ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1

08 փետրվարի 2011թ. գ. Այգաբաց

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի, ինչպես նաև «Բյուջետային համակարգերի մասին» Հայաստանի Հանրապետության 33-րդ հոդվածի առաջին կետի դրույթներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել համայնքի 2011թ. բյուջեի եռամսյա համամասնությունները համաձայն հավելվածի:

Այգաբաց համայնքի ղեկավար՝/ / Ս. Վանեցյան

08 փետրվարի 2011թ
գ . Այգաբաց

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Այգաբաց համայնքի
ղեկավարի թիվ 2որոշման

	ընդամենը	այդ թվում ըստ եռամսյակների			
		1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
եկամուտներ	14098.3	2973.5	6375.5	10147.5	14098.3
ծախսեր	16341.8	5217.0	8619.0	12391.0	16341.8

Այգաբաց համայնքի ղեկավար՝/ / Ս. Վանեցյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

11 փետրվարի 2010թ. ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2 գ. Այգաբաց

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին » N 48 որոշման 1-ին կետով հաստատված կարգով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թվականի հունվարի 18-ի N 48 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 23-ի N -1129- Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ստորագրության նմուշներն հաստատելու համար լիազորել Այգաբացի համայնքի ղեկավար Սասունիկ Վանեցյանին և գլխավոր մասնագետ հաշվապահ Անդրանիկ Հուրոյանին:

Այգաբաց համայնքի ղեկավար՝ / / Ս. Վանեցյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

26 մայիսի 2011թ. ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3 գ. Այգաբաց

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ֆոնդային բյուջեով նախատեսված 1-ին բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլդասի չպատկանող/ հոդված 5131 –ից 140000 դրամ տրամադրել Այգաբացի համայնքի համար դեկորատիվ տնկիներ ձեռք բերելուն:

Այգաբաց համայնքի ղեկավար՝ / / Ս. Վանեցյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

<< 15 >> հուլիսի _ _ 2011թ. N: 4 գ..Այգաբաց

Համայնքում քաղաքացիական պաշտպանության շտաբ, տարահանման հանձնաժողով եւ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ ստեղծելու մասին

Ղեկավարվելով 29.12.1996թ. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» եւ 29.03.2002թ. «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Այգաբաց համայնքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորման, կազմակերպման եւ իրականացման նպատակով.

1.Ստեղծել՝

1)քաղաքացիական պաշտպանության շտաբ, շտաբի պետ նշանակել համայնքի ղեկավարի տեղակալին եւ շտաբը համալրել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետներով:

2) Համայնքի տարահանման հանձնաժողով, հանձնաժողովի նախագահ նշանակել համայնքի դպրոցի տնօրենին եւ հանձնաժողովը համալրել դպրոցի ուսուցչական կազմից:

3) Քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝

ա.փրկարարական խումբ՝ 1/9 անձնակազմով, հրամանատար՝ Ս. Ալթունյան

բ. կապի խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Լ. Ավետիսյան

գ. քիմիական, ճառագայթային դիտարկման կետ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Տ. Մխոյան

դ. անհատական պաշտպանության միջոցներ բաշխման խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Ֆ. Աթոյան

ե. հասարակական կարգի պահպանման խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Ա. Հուրոյան

զ. գյուղատնտեսական կենդանիների եւ բույսերի պաշտպանության խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Է. Բալասանյան

2.Հանձնարարել՝

1) քաղաքացիական պաշտպանության շտաբի պետին՝

ա. քաղաքացիական պաշտպանության կազմավորումները համալրել անձնակազմով, զույքով եւ տեխնիկայով.

բ. կազմակերպել եւ իրականացնել համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի, կազմավորումների անձնակազմի եւ բնակչության ուսուցումը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 30.01.2003թ. թիվ 134-Ն որոշման.

գ. կազմել եւ յուրաքանչյուր տարի մինչեւ հունվարի 1-ը ճշտել համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 22.04.2004թ. թիվ 633-Ն որոշման.

3.Համայնքապետարանի քարտուղարին՝

սույն որոշման մասին իրազեկել ըստ պատկանելիության:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը իրականացնում եմ անձամբ

Այգաբացի համայնքի ղեկավար՝ Ս. Վանեցյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

15 օգոստոսի 2011թ. ՈՐՈՇՈՒՄ 5 գ. Այգաբաց

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթով՝

Որոշում եմ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի միջնակարգ դպրոցի ուսուցիչներին և գյուղապետարանի աշխատողներին թատրոնի տոմսեր գնելու համար 2011թ. բյուջեով նախատեսված 08 բաժնի 2-րդ խմբի 4-րդ դասի 4269 հոդվածից հատկացնել 35000 դրամ:

Այգաբացի համայնքի ղեկավար՝ / / Ս. Վանեցյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

15 օգոստոսի 2011թ. ՈՐՈՇՈՒՄ 6 գ. Այգաբաց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ԳՈՒՅՔԱԳՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի դրույթներով

Որոշում եմ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի սեփականությունը համարվող գույքի գույքագրման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով

Վանեցյան Սասուն – հանձնաժողովի նախագահ
Անդրանիկ Հուրոյան
Լուսինե Մաթևոսյան
Չալոյան Արեստակես
Բալասանյան Էդգար
Բալասանյան Հովհաննես

Այգաբացի համայնքի ղեկավար՝ / / Ս. Վանեցյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ 7

5 հոկտեմբերի 2011թ. գ. Այգաբաց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԱԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՔԻ 12Փ 21 Տ. ՀԱՍՑԵՆ 21Ա և 21 Բ ՄԱՍԵՐՈՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի դրույթով՝

Որոշում եմ

Շիրակի մարզի Այգաբացի համայնքի 12փ. 21տ. հասցեն հասցեավորել հետևյալ կերպ՝ 12փ. 21 ^{ա} տուն -- Վարոս Ալեքյանյանը իր ընտանիքով և 12փ. 21^{բ} տուն -- Մարտին Ալեքսանյանը՝ իր ընտանիքով:

Այգաբացի համայնքի ղեկավար՝ / / Ս. Վանեցյան

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ
Ա Յ Գ Ա Բ Ա Ց Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

ՈՐՈՇՈՒՄ 8

14 հոկտեմբերի 2011թ. գ. Այգաբաց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱԼԹՈՒՆՅԱՆԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով՝

Որոշում եմ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի 2011թ.-ի բյուջեի պահուստային ֆոնդի 11-րդ բաժնի 1-ին խմբի 2-րդ դասի 4729 հոդվածից 60000 դրամ տրամադրել Այգաբացի համայնքի բնակիչ Արմենուհի Ալթունյանի ուսման վարձը փոխանցելու համար:

Այգաբացի համայնքի ղեկավար՝ / / Ս. Վանեցյան

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ
Ա Յ Գ Ա Բ Ա Ց Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

ՈՐՈՇՈՒՄ 9

14 հոկտեմբերի 2011թ. գ. Այգաբաց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով՝

Որոշում եմ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Այգաբացի համայնքի 2011թ.-ի բյուջեի պահուստային ֆոնդի 11-րդ բաժնի 1-ին խմբի 2-րդ դասի 4269 հոդվածից 84800 դրամ տրամադրել Այգաբացի գյուղապետարանի համար գույք ձեռք բերելուն:

Այգաբացի համայնքի ղեկավար՝ / / Ս. Վանեցյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ 11

28 հոկտեմբերի 2011թ. գ. Այգաբաց

ՔԱՂ . ՀԱՍՄԻԿ ԿՈՐՅՈՒՆԻ ՍԱՆՈՍՅԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱԲԱՑԻ ՀԱՄԱՆՔԻ 1Փ. 20Տ. ԲՆԱԿԱՐԱՆԻ

ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ,ԻՐ ՀԻՎԱՆԴ ՄՈՐ /ԾՆՎԱԾ00.00.1932Թ/ ՀԱՍԱՆԵԼԻՔ ՄԱՍԻ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Շիրակի մարզի Այգաբացի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին է դիմել քաղ. Հասմիկ Կորյունի Սանոսյանը /բնակվող Շիրակի մարզի Այգաբացի համայնքի 1փ.20տ. հասցեում/,վերոհիշյալ բնակարանի համասեփականատեր ,հիվանդ մոր՝ Մանյա Մեխասկի Սանոսյանի հասանելիք մասի օտարելու թույլտվության խնդրանքով:
Քանի որ վերոհիշյալ հասցեի բնակարանի վաճառքով չի խախտվում հիվանդ մոր բնակարանի սեփականության իրավունքը, ուստի ելնելով հիվանդ մոր շահերից՝համայնքապետարանին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը հարցը դրական կարծիքով ներկայացնում է համայնքի ղեկավարի հաստատմանը:

Որոշում եմ

Թույլատրել քաղ. Հասմիկ Կորյունի Սանոսյանին Շիրակի մարզի Այգաբացի համայնքի 1փ. 20տ. հասցեի բնակարանի համասեփականատեր հիվանդ մոր՝ Մանյա Կորյունի Սանոսյանի/ծնված 00.00.1932թ. / հասանելիք մասը օտարել:

Այգաբացի համայնքի ղեկավար՝ / / Ս. Վանեցյան